2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) կիսամյակային ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Կազմակերպության ակտիվների ու պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների կիսամյակային զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Կազմակերպության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Կազմակերպությունը:

Կազմակերպության Վարչության անդամներ՝

Հրաչյա Թոխմախյան	**Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն**		31.08.17թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Անուշ Պետրոսյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն**		31.08.17
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Միքայելյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		31.08.2017թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«FINCA» UNIVERSAL CREDIT ORGANIZATION
«ՖԻՆՔԱ»
"FINCA"
00445174
ԵՐԵՎԱՆ * YEREVAN

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ

ՖԻՆՔԱ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԶԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կառավարման մարմինների 2017 թվականի գործունեության առաջին կիսամյակի սույն զեկույցը ներկայացնում է՝

- Կազմակերպության բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- Կարևոր դեպքերի նկարագիրը,
- Կազմակերպության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Ընդհանուր տեղեկություններ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2006 թվականի մարտի 28-ին որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն: ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) խորհրդի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 128Ա որոշմամբ Կազմակերպությունը գրանցվել է և ստացել թիվ 13 գրանցման վկայական:

Կազմակերպությունը ստեղծվել է «ՖԻՆՔԱ Ինթերնեյշնլ Ինք.» ամերիկյան ոչ առևտրային կազմակերպության կողմից ՀՀ միկրոֆինանսական շուկայի ձևավորման նախնական փուլում՝ նպատակ ունենալով ֆինանսական ծառայություններ մատուցել ֆինանսական հաստատություններից սահմանափակ վարկավորման հնարավորություն և ամենացածր եկամուտ ունեցող ձեռնարկատերերին:

Կազմակերպության կանոնադրական կապիտալը կազմում է 4,905,960,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 490,596 հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Կազմակերպության միակ բաժնետեր է հանդիսանում «ՖԻՆՔԱ Մայքրոֆայնենս Կոոպերատիվ Յու. Էյ» կազմակերպությունը:

Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպությանը բնորոշ բոլոր ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը:

Գործունեությունը սկսելուց ի վեր Կազմակերպությունն իր բնույթով հանդիսանում է ունիվերսալ վարկային կազմակերպություն, մասնավորապես, որպես հիմնական գործունեություն ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և սպառողական վարկեր է տրամադրում ֆիզիկական և իրավաբանական անձանց, որպես գործակալ կնքում է ԱՊՊԱ և ապահովագրական այլ պայմանագրեր: Իր կողմից մատուցվող ծառայություններն ամբողջականացնելու նպատակով Կազմակերպությունը սկսած 2013թ-ից մատուցում է նաև արտարժույթի փոխանակման ծառայություններ:

Կազմակերպությունն ունի 37 մասնաճյուղ և վարկավորում է իրականացնում ՀՀ բոլոր մարզերում:

Էական իրադարձություններ և փաստեր

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցի հրապարակման օրը Կազմակերպության գործունեությունում տեղի են ունեցել հետևյալ նշանակալի իրադարձությունները.

- 2017 թվականի փետրվարի 22-ին Կազմակերպությունը թողարկել և ամբողջովին տեղաբաշխել է 4,000,000 ԱՄՆ դոլարի չափով պարտատոմսերի առաջին տրանշը: Պարտատոմսերը թողարկվել են երկու տարի ժամկետով և 7.5% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում:
- 2017 թվականի ապրիլի 27-ին Կազմակերպությունը թողարկել և ամբողջովին տեղաբաշխել է 1,500,000 հազար ՀՀ դրամի չափով պարտատոմսերի

երկրորդ տրանշը: Պարտատոմսերը թողարկվել են երկու տարի ժամկետով և 12.75% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում:

- 2017 թվականի մարտի 13-ին Կազմակերպության կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի առաջին տրանշը և 2017 թվականի մայիսի 12–ին՝ երկրորդ տրանշը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում և ընդգրկվել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում: Ցուցակման գործընթացը հնարավորություն է տալիս սկսելու պարտատոմսերի շրջանառությունը բորսայում, ինչպես նաև ցուցակման պահից թույլատրվել են նշված պարտատոմսերով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը: Կազմակերպության կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի շուկա ստեղծողի կարգավիճակ է շնորհվել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ին: Շուկա ստեղծողի կարգավիճակում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ -ը կապահովի պարտատոմսերի անընդհատ երկկողմանի գնանշումներ՝ երաշխավորելով երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունը և ներդրողների համար ստեղծելով ցանկացած պահին դրանք վաճառելու կամ գնելու հնարավորություն:
- 2017 թվականի հուլիսին «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ միակ բաժնետիրոջ Տարեկան ընդհանուր ժողովը որոշում է կայացրել հաստատել Ընկերության Տնօրենների Խորհրդի առաջարկը 2016թ. Ընկերության շահույթից 562,485,000 ՀՀ դրամ (հինգ հարյուր վաթսուներկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար ՀՀ դրամ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց շահութաբաժնի վճարմանը ուղղելու վերաբերյալ:

Նշված հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել Կազմակերպության 2017 թվականի երկրորդ եռամսյակի հրապարակվող միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Փաստեր, ցուցանիշներ

-9.4 %	**2017 թվականի հունիս ամսվա վերջին ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 27,449,081 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 9.4 %-ով:**
-7.2 %	**2017 թվականի հունիս ամսվա վերջին հաճախորդներին տրված վարկերի մեծությունը կազմել է 24,429,462 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7.2 %-ով:**
-15.3 %	**2017 թվականի հունիս ամսվա վերջին Կազմակերպության ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է**

	20,701,163 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 15.3 %-ով:
+2.8 անգամ	**2017 թվականի վերջին զուտ շահույթը կազմել է 580,027 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածին կազմել է ընդամենը 206,895 հազ. ՀՀ դրամ:**
+15.5 %	**2017 թվականի հունիս ամսվա վերջին Կազմակերպության ընդհանուր կապիտալի մեծությունը կազմել է 6,747,918 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 15.5 %-ով:**

Ակտիվներ

Կազմակերպության ընդհանուր ակտիվները 2017թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 27,449,081 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի (30,289,245 հազ. ՀՀ դրամ) համեմատ նվազելով 2,840,164 հազ. ՀՀ դրամով կամ 9.4%-ով: Ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի նվազմամբ, ինչը մանրամասն նկարագրված է հաջորդ բաժնում:

Ակտիվների կառուցվածքը 2017թ. հունիսի 30 դրությամբ ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

Վարկեր

2017 թ. հունիսի 30-ին հաճախորդներին տրված վարկերի ծավալը կազմել է 24,429,462 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7.2%-ով կամ 1,903,277 հազ. ՀՀ դրամով:

Հաճախորդների տրված վարկերի նվազումը պայմանավորված էր հետևյալ գործոններով՝

- խմբային վարկերի տրամադրման դադարեցում, ինչը նպատակ ուներ բարելավել վարկային պորտֆելի որակը և բարեխիղճ հաճախորդներին տեղափոխել անհատական վարկավորման ոլորտ:

- բանկային համակարգում հավելյալ լիկվիդային միջոցների առկայությամբ պայմանավորված մրցակցության բարձրացում տեղական բանկերի կողմից, որոնք ակտիվորեն սկսեցին տրամադրել միկրոֆինանսական վարկեր

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2017թ.-ի հունիսի վերջի դրությամբ ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալը նվազել է 3.2%-ով կամ 600,615 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 18,149,171 հազ. ՀՀ դրամ, անհատ ձեռնարկատերերին տրված վարկերի ծավալը նվազել է 18.8%-ով կամ 1,233,788 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 5,345,394 հազ. ՀՀ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրված վարկերի ծավալն նվազել է 6.9%-ով կամ 68,876 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 934,897 հազ. ՀՀ դրամ:

2017թ. հունիսի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ վարկատեսակների ներկայացվում է ստորև.



Գծապատկեր 2

2017թ. հունիսի վերջի դրությամբ Կազմակերպության վարկային պորտֆելի կառուցվածքը ըստ տնտեսության ոլորտների ներկայացվում է գծապատկեր 3-ում.



Գծապատկեր 3

Միջազգային վարկային համագործակցություններ

Կազմակերպության ղեկավարությունը, կարևորելով միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը, մշտապես առաջնային դեր է հատկացնում դրանց խորացմանը և ընդլայնմանը:

2017 թվականի ընթացքում Կազմակերպությունը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Կազմակերպության և «Գերմանահայկական հիմնադրամի» միջև 2015 թվականի վերջին «ՀՀ Գյուղատնտեսության Ոլորտի Աջակցում, Երկրորդ Փուլ» ծրագրով կնքված պայմանագրի շրջանակներում 2016 թվականին մեկնարկվեց գյուղատնտեսության ոլորտի աջակցմանն ուղղված ենթավարկերի տրամադրումը Կազմակերպության կողմից և դրանց վերաֆինանսավորումը Վերականգնման վարկային հաստատության (KFW) կողմից: 2017 թվականի ընթացքում Կազմակերպության կողմից տրամադրվել և Վերականգնման վարկային հաստատության (KFW) կողմից վերաֆինանսավորվել են 56,187 հազ. ՀՀ դրամ ընդհանուր ծավալով վարկեր:

2017 թվականին Կազմակերպության հետ համագործակցող և գործընկեր միջազգային կառույցների շարքում են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ/EBRD), Black Sea Trade and Development Bank–ը (BSTDB), International Finance Corporation-ը, BlueOrchard–ը, Developing World Markets-ը, responsAbility

Investments AG–ն, MHB-BANK–ը, BANK IM BISTUM ESSEN eG–ն, Asian Development Bank-ը:

Պարտավորություններ

2017թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության պարտավորությունները կազմել են 20,701,163 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 15.3%-ով կամ 3,744,588 հազ. ՀՀ դրամով:

2017 թ. հունիսի վերջի դրությամբ Կազմակերպության կողմից օտարերկրյա ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունները կազմել են 12,719,742 հազ. ՀՀ դրամ կամ պարտավորությունների 61.4%-ը, ինչը փաստում է, որ Կազմակերպության համար առանցքային դեր և նշանակություն ունի միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության խորացումը և ընդլայնումը:

Պարտավորությունների 16.9%–ը կազմում են Կազմակերպության կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերը 3,505,040 հազ. ՀՀ դրամի չափով:

Պարտավորությունների 5.8%–ը կազմում են հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունները 1,202,643 հազ. ՀՀ դրամի չափով, որոնց գծով որպես գրավ տրվել են ՀՀ պետական պարտքային արժեթղթեր 1,273,967 հազար ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքի չափով:

2017թ.–ի հունիսին Կազմակերպությունը ստացել է 1,441,410 հազար ՀՀ դրամի կարճաժամկետ փոխառություն փախկապակցված կազմակերպությունից, ինչը մասնավորապես իրացվելիության ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը ուղղված գործիք է հանդիսանում:

Սեփական կապիտալ

2017թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության սեփական կապիտալը կազմել է 6,747,918 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 904,424 հազ. ՀՀ դրամով կամ 15.5%-ով: Սեփական կապիտալի ավելացումը պայմանավորված է կուտակված շահույթի աճով:

Եկամուտներ և ծախսեր

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել են 2,809,728 հազ. ՀՀ դրամ իսկ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները՝ 1,111,203 հազ. ՀՀ դրամ, այսպիսով հաճախորդներին տրված վարկերից ստացված եկամուտները կազմել են 3,920,931 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազելով 9.3%-ով կամ 402,158 հազ. ՀՀ դրամով: Տոկոսային և նմանատիպ եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի նվազմամբ:

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել են 854,128 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 35.16%-ով կամ 463,155 հազ. ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ ծախսերի նվազմանը նպաստել են հետևյալ գործոնները.

- 2017թ. հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության փոխառու միջոցները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 3,975,419 հազ. ՀՀ դրամով կամ 17.5%–ով:
- 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում նախկինում բարձր տոկոսադրույքով ներգրաված փոխառու միջոցները փոխարինվել են կազմակերպության կողմից թողարկված պարտատոմսերով, որոնք ավելի ցածր տոկոսադրույքով են տեղաբաշխվել:
- 2017 թվականի հունիսի 30-ի դրությամբ փոխվել է փոխառու միջոցների արժութային կառուցվածքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ. ԱՄՆ դոլարով ներգրաված միջոցների տեսակարար կշիռը 73%-ից դարձել է 83%, որոնք ունեն ավելի ցածր տոկոսադրույք, քան ՀՀ դրամով ներգրաված միջոցները:
- 2017 թվականի ընթացքում իրականացվել է ավելի խիստ և արդյունավետ իրացվելիության կառավարում:

Տոկոսային եկամուտների և ծախսերի համամասնորեն նվազելու արդյունքում 2017 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքում Կազմակերպության զուտ տոկոսային եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էականորեն չեն փոխվել:

Հաճախորդներին տրված վարկերի գծով հնարավոր կուրուստների ծախսը հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքում կազմել է 499,994 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 29.8%-ով կամ 212,152 հազ. ՀՀ դրամով, ինչը հաճախորդներին տրված վարկային պորտֆելի որակի բարելավման արդյունք է:

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ

Շահութաբերության գործակիցներ և շահաբաժիններ

2017 թվականի առաջին կիսամյակի գարծունեության արդյունքում զուտ շահույթը կազմել է 580,027 հազ. ՀՀ դրամ:

Կազմակերպության գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են.

Կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 17.57%,
Ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 4.11%:

Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 2,365 ՀՀ դրամ:

Կազմակերպության մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 2017թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 13,754 ՀՀ դրամ, անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ:

Բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը (P/E ratio) կազմել է 5.82:

Ներքին հսկողության համակարգ

Ներքին հսկողության համակարգը Կազմակերպության գործունեության բոլոր ոլորտների և գործընթացների նկատմամբ հսկողության ապահովումն է:

Կազմակերպությունում ներկայումս ներդրված է արդյունավետ, միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, որն ամրագրված է Կազմակերպության ներքին իրավական ակտերով:

Ավելին, Կազմակերպությունում գործում են Ներքին հսկողության, Վարկային ռիսկերի կառավարման և Ներքին աուդիտի ստորաբաժանումներ, որոնք նպաստում են ներքին հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Ներքին հսկողության բաժնի խնդիրն է համոզվել, որ Կազմակերպությունում ստեղծված ներքին հսկողության համակարգն իրականում արդյունավետ գործում է: Վարկային ռիսկերի կառավարման բաժնի գործառույթն է ուժեղացնել ներքին հսկողության համակարգը վարկավորման գործընթացներում: Ներքին աուդիտի բաժնի խնդիրն է բացահայտել Կազմակերպության նպատակների իրագործմանը խոչընդոտող հնարավոր ռիսկերի բացահայտումը և ներքին հսկողության համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Կազմակերպության աշխատակիցները

Նվիրված աշխատակիցները Կազմակերպության ամենամեծ ձեռքբերումներից է, Կազմակերպության ներկայիս հաջողության և հետագա զարգացման հիմնասյունը: Կազմակերպության հմուտ մասնագետներից կազմված թիմը համախմբված է մեկ ընդհանուր նպատակի շուրջ և ծառայում է կազմակերպության առաքելությանը՝ այն է <<Հիմնավոր լուծումների միջոցով հաղթահարել աղքատությունը՝ օգնելով մարդկանց ստեղծել ակտիվներ, նոր աշխատատեղեր և բարելավել իրենց ապրելակերպը>>: Կազմակերպությունը առավել քան կարևորում է ընդունված արժեքային համակարգի չափանիշների, միջանձնային դրական հարաբերությունների պահպանումը, ջերմ մթնոլորտը, թափանցիկությունը և, ընդհանուր առմամբ, կորպորատիվ մշակույթը, ինչը ստեղծվել է աշխատակիցների ջանքերի շնորհիվ:

Կազմակերպության աշխատակիցները շարունակում են ջանք չխնայել՝ հաճախորդներին մատուցելով նորարական և օգտակար ֆինանսական ծառայություններ՝ հնարավորություն ընձեռելով ցածր եկամուտ ունեցող անհատներին և համայնքներին ներդրում կատարել իրենց ապագայում և կերտելու ավելի լուսավոր ապագա:

Աշխատանքների արդյունավետ կառավարմանն ու աշխատակիցների զարգացմանը մեծապես նպաստում են ներքին վերապատրաստումները՝ միտված զարգացնելու ֆինանսական տեղեկացվածությունը, հաղորդակցման և բանակցելու ունակությունները, ծանոթացնելու նոր պրոդուկտների և ծառայությունների մանրամասնություններին, վարկավորման տեխնոլոգիաներին, և ապահովելու վարվելակերպի կանոնների պահպանմանը, ինչպես նաև ապահովելու հաճախորդամետ մոտեցում և դրական միջանձնային հարաբերություններ:

Յուրաքանչյուր աշխատակցի հնարավորություն է տրվում զարգացնելու թե՛ մասնագիտական և թե՛ անձնային հատկանիշները, ինչպես նաև ունենալու մասնագիտական առաջխաղացում Կազմակերպության ներսում:

Այս կիսամյակում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ նվիրված ազգային և միջազգային տոներին, որոնք նպաստում են աշխատակիցների թիմային ոգու ապրապնդմանը և միջանձնային փոխհարաբերությունների զարգացմանը:

Աշխատակիցների համար պարբերաբար մշակվում են արտոնությունների ծրագրեր և ստեղծվում առաջխաղացման հնարավորություններ: Ի լրումն բժշկական ապահովագրությանը, կյանքի նշանակալի իրադարձությունների շնորհավորանքներին և այդ առիթով տրվող պարգևավճարներին, 2017թ.-ին մեկնարկեց աշխատակիցների համար նախատեսված արտոնյալ պայմաններով վարկային պրոդուկների տրամադրումը, որը մեծ պահանջարկ է վայելում և օգնում է աշխատակիցներին բավարարելու իրենց ֆինանսական կարիքները անհամեմատ բարենպաստ պայմաններով:

Այժմ մշակվում է նոր ծրագիր՝ աշխատակիցների ընտրության գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու և կառավարելու համար, որը կգործարկվի հաջորդ կիսամյակում և կնպաստի թեկնածուների բազայի համակարգված մշակմանը:

Տարեկան երկու անգամ շարունակվում են իրականացվել աշխատակիցների գնահատման միջոցառումներ, որոնք օգնում են հստակ և թափանցիկ տեղեկության հիման վրա գնահատել աշխատակցի ունակությունները և զարգացնել թույլ կողմերը:

Փորձը ցույց է տալիս, որ այս բոլոր գործընթացների արդյունքում աշխատակիցները դառնում են էլ ավելի պատրաստակամ և ճկուն՝ դիմավորելու նոր մարտահրավերներ և իրականացնելու արդյունավետ նորամուծություններ:

2017թ.-ի առաջին կիսամյակում Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 640 մարդ:

Տարածքային գործունեություն

Կազմակերպության մասնաճյուղերը տեղակայված են ՀՀ բոլոր 11 մարզերում և 2017 թվականի հունիսի վերջի դրությամբ դրանց թիվը կազմում է 37:

Կազմակերպությունը մշտապես իրականացնում է կադրերի որակավորման բարձրացմանը, նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը, մասնաճյուղերի կապիտալ վերանորոգմանը և տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումներ իր բոլոր մասնաճյուղերում:

Կազմակերպության հետագա զարգացման նկարագիրը

Կազմակերպության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են.

- վարկային պորտֆելի որակի բարելավում, հաճախորդների վարկունակության գնահատման բարելավման և պատասխանատու ֆինանսավորում իրականացնելու միջոցով,
- հաճախորդների դրական փորձառություն ապահովելու միջոցով հաճախորդների պահպանման ցուցանիշի բարելավում, ինչպես նաև նոր հաճախորդների ներգրավում,
- ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա, ֆինանսավորող կազմակերպությունների ցանցի ընդլայնում ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում,
- գործարար գործընթացների օպտիմալացում՝ պահպանելով գործառնական ռիսկերի ընդունելի մակարդակ,
- աշխատակիցների որակավորման բարձրացում ներկազմակերպական և արտաքին դասընթացների միջոցով,
- Միկրոֆինանսավորման ոլորտում մրցակցային դիրքի բարելավում, նորարարական վարկատեսակների մշակում և ներդրում:

Ապագա ժամանակահատվածում առաջադրված խնդիրները պայմանավորված են Կազմակերպության առջև դրված նպատակներով և միտված են բարելավել գործունեության ինչպես որակական բնութագրիչները, այնպես էլ ֆինանսական ցուցանիշները:

Հեռանկարային զարգացման ուղղությունները ապահովելու նպատակով Կազմակերպությունը պատրաստվում է ձեռնարկել հետևյալը.

- «Հաճախորդների պաշտպանության սերտիֆիկատ»–ի ստացում «Smart Campaign»–ից, ինչը կհավաստի, որ Կազմակերպությունը հետևում է և համապատասխանում է միկրոֆինանսավորման ոլորտում միջազգայնորեն ճանաչված հաճախորդների պաշտպանության սկզբունքներին:
- 2016 թվականին մեկնարկած «հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի» ներդրման նախագծի ավարտ, ինչը կնպաստի հաճախորդների վերաբերյալ համակարգված տեղեկատվության հավաքագրմանը և հավաքագրված տեղեկատվության մշակման միջոցով նրանց կարիքների բացահայտմանը: Այս համակարգը նաև հնարավորություն կտա ունենալ վարկային որոշումների ավտոմատ կայացման գործիք:

- Պլանշետային համակարգիչների միջոցով վարկավորման գործընթացի սկզբնական փուլերի մասնաճյուղերից դուրս իրականացում (tablet banking), ինչը ուղղված է վարկավորման գործընթացի օպտիմալացմանը և հաճախորդի փորձառության բարելավմանը,

Ենթահավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 2)

Ֆինանսական վիճակի մասին
«30» հունիս 2017թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ազաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա վերջ
1	**Ակտիվներ**		
1.1	Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	770,419	506,839
1.2	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ		-
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ		732,696
1.4	Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ		-
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	24,107,842	25,206,093
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ	1,255,851	1,249,694
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	55,429	-
1.8	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		-
1.9	Վարձակալության գծով ստացվելիք գումարներ		-
1.10	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում		-
1.11	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում	149,439	163,452
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	434,428	472,555
1.13	Հետաձգված հարկային ակտիվներ	128,638	225,407
1.14	Ստացվելիք տոկոսներ	339,736	338,722
1.15	Այլ ակտիվներ	207,299	142,408
	Ընդամենը՝ ակտիվներ	**27,449,081**	**29,037,866**
2	**Պարտավորություններ**		
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	4,770,943	6,334,439
2.2	Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	11,030,280	15,129,677
2.3	Հաճախորդներից ներգրավված փոխառություններ		-
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	328,408	215,681
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ	-	-
2.6	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	3,419,390	-
2.7	Պահուստներ	7,499	-
2.8	Վճարվելիք գումարներ	48,012	-
2.9	Հետաձգված հարկային պարտավորություններ		-
2.10	Վճարվելիք տոկոսներ	250,885	300,737
2.11	Այլ պարտավորություններ	845,746	878,922
	Ընդամենը՝ պարտավորություններ	**20,701,163**	**22,859,456**
3	**Կապիտալ**		
3.1	Կանոնադրական կապիտալ	4,905,960	4,905,960
3.2	Պահուստներ		
3.2.1	Գլխավոր պահուստ	125,799	125,799
3.2.2	Վերագնահատման պահուստներ	56,339	58,375
3.3	Կուտակված շահույթ	1,659,820	1,088,276
	Ընդամենը՝ կապիտալ	**6,747,918**	**6,178,410**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ	**27,449,081**	**29,037,866**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/2017

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն) _____ Հ.Թոխմախյան
Գլխավոր հաշվապահ _____ Ա.Միքայելյան

Ենթահավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

Ենթահավելված 6 ա

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«30» հունիս 2017թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան (ստուգված/չստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,809,728	3,467,125
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	854,128	1,317,283
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**1,955,600**	**2,149,842**
Եկամուտ շահաբաժիններից	0	0
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	1,111,203	855,964
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(5,986)	(11,388)
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ շահույթ/վնաս	(51,925)	(193,622)
Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ(վնաս)	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)		
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)	37,757	52,825
Այլ գործառնական եկամուտներ	205,205	223,329
Գործառնական եկամուտներ	**3,251,854**	**3,076,950**
Վարկերից և այլ փոխատվություններից առաջացած կորուստներ	(499,994)	(712,146)
Ընդհանուր վարչական ծախսեր	1,893,195	1,990,967
Այլ գործառնական ծախսեր	133,631	115,218
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը	**725,034**	**258,619**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	145,007	51,724
Ժամանակաշրջանի շահույթ	**580,027**	**206,895**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/2017

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

Հ.Թոխմախյան
Ա.Միքայելյան

Ենթահավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

Ենթահավելված 6 բ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 բ)

«30» հունիս 2017թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան (ստուգված/չստուգված)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	13,716	58,945
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	13,716	58,945
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	15,752	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	(2,036)	58,945
Համապարփակ ֆինանսական արդյունք	(2,036)	58,945
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/2017

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

Հ.Թոխմախյան
Ա.Միքայելյան

Ենթահավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

Ենթահավելված 8

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)
«30» հունիս 2017թ.
"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը	Չվերաբաշխվող բաժնեմաս	Լոգիստիկ ընդամենը
	Կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ	Հոտ գնված կապիտալ	Ընդամենը										
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (I աղյուսակ)													
9. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2016թ. (ստուգված/չստուգված)	**4,905,960**	**-**	**4,905,960**	**-**	**125,799**	**-**	**(25,480)**	**-**	**-**	**554,245**	**5,560,524**	**-**	**5,560,524**
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը										17,132	17,132		17,132
10.Վերահաշվարկված մնացորդը	**4,905,960**	**-**	**4,905,960**	**-**	**125,799**	**-**	**(25,480)**	**-**	**-**	**571,377**	**5,577,656**	**-**	**5,577,656**
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-		-							-	-		-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին			-								-		-
12. Համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	-	-	-	**206,893**	**206,893**	-	**206,893**
12.1. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ/վնաս 01/01/2016թ.-30/06/2016թ.										206,893	206,893		206,893
13. Շահութաբաժիններ											-		-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝							58,945				58,945		58,945
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում											-		-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին											-		-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում											-		-
15.3. Էմիսիոն վնասի ծածկում											-		-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում											-		-
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր													-
16. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2016թ.	**4,905,960**	**-**	**4,905,960**	**-**	**125,799**	**-**	**33,465**	**-**	**-**	**778,270**	**5,843,494**	**-**	**5,843,494**

Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)													
9. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2017թ. (ստուգված/չստուգված)	4,905,960	-	4,905,960	-	125,799	-	58,375	-	-	1,088,276	6,178,410	-	6,178,410
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը										(8,482)	(8,482)		(8,482)
10.Վերահաշվարկված մնացորդը	4,905,960	-	4,905,960	-	125,799	-	58,375	-	-	1,079,794	6,169,928	-	6,169,928
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	-		-							-	-		-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին			-								-		-
12. Համապարփակ եկամուտ	-	-	-	-	-	-	-	-	-	580,027	580,027	-	580,027
12.1. Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ/վնաս 01/01/2017թ.-30/06/2017թ.										580,027	580,027		580,027
13. Շահութաբաժիններ											-		-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝							(2,036)				(2,036)		(2,036)
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում											-		-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին											-		-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում											-		-
15.3. Էմիսիոն վնասի ծածկում											-		-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում											-		-
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր													-
16. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2017թ.	4,905,960	-	4,905,960	-	125,799	-	56,339	-	-	1,659,821	6,747,919	-	6,747,919

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/2017

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն) Հ.Թոխմախյան
Գլխավոր հաշվապահ Ա.Միքայելյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (Ձև 4)

«30» հունիս 2017թ.

"ՖԻՆՔԱ" ՈՒՎԿ ՓԲԸ ք.Երևան Ագաթանգեղոսի 2ա
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը
1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**1,908,269**	**1,319,332**
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**2,039,780**	**1,622,854**
Ստացված տոկոսներ	2,491,212	3,088,806
Վճարված տոկոսներ	(827,303)	(1,245,017)
Կորուստների վերականգնում	503,085	311,997
Ստացված շահաբաժիններ	0	0
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	1,083,739	831,212
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(690,681)	(826,921)
Վճարված հարկեր	(520,272)	(537,223)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**(131,511)**	**(303,522)**
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	439,631	798,715
Ներգրավված վարկերի ավելացում (նվազում)	0	0
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում	25,403	(202,684)
Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարների նվազում	0	0
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(596,545)	(899,553)
2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	**(31,791)**	**(43,516)**
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում)		
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)		
Բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)	0	0
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	(2,906)	(5,327)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(28,885)	(38,189)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	0	0
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	**(2,348,063)**	**-732,503**
Վճարված շահաբաժիններ		
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	(1,735,942)	(157,586)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	(4,059,921)	(574,917)
Վարկային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	3,447,800	
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում	0	0
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(4,683)	(19,249)
Դրամական միջոցների զուտ հոսք	**(476,268)**	**524,064**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	1,248,025	1,190,298
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	771,757	1,714,362

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/2017

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

Հ.Թոխմախյան
Ա.Միքայելյան

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

Ամսաթիվը 01/04/2017

30/06/2017

(հազ. դրամ)

Նորմատիվներ*	Փաստացի մեծությունը	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	4,905,960	150,000	Խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	6,532,293	1,000,000	Խախտում առկա չէ
$Ն_1$ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	24.3%	10.0%	Խախտում առկա չէ
$Ն_3^1$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	1.0%	25.0%	Խախտում առկա չէ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14/07/2017

ԿՏ

Վարկային կազմակերպության վարչության նախագահ
(Գործադիր տնօրեն) Հ.Թոխմախյան

Գլխավոր հաշվապահ Ա.Միքայելյան